



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի


Ա.Ի.ԵՏԱՐԵՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՎԻՃԱԿԻՍ ՀԱՅՈՅ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱՊԻՈՅ

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՔ.



ԽՏՐՈՒՄԻ 4. — ՄԵԼԻԹՈՒՈՒԼԻ
Աղօթատան քահանայն, ծե-
րունիՏէրԱռաքելնՍարգիս-
Վարդապետեանց հանդեաւ ի
Քրիստոս, եւ նորա պատկառե-
լի, հեղահոգի եւ աշխատասէր բնաւորու-
թենէն մեծապէս գոհ եւ շնորհակալ էր Մե-
լիթուիոլի բարեպաշտ ժողովուրդը, որ եւ այս
իւր շնորհակալութիւնը դեռ նոր յայտներ
էր Գեր. Առաջնորդին Վիճակիս, երբոր նա

իզարձին իւրում ինախիջեւանէ՝ դեկտեմ-
բերի 15-ին անցաւ Մելիթուիոլէն :

Առաջնորդական Ատեանս հրամանագրեց
Նողայսքի արժ. Տէր Գէորգ քահանային Թու-
մանեան՝ որ ըստ առաջնոյն հովուէ դար-
ձեալ առ այժմ՝ Մելիթուիոլի ժողովուրդը,
եւ Մելիթուիոլի երէցփոխան մեծարոյ Վար-
դերես Աղային Շարվարեանց գրեց՝ որ Աղօ-
թատան զարդարանքները զգուշութեամբ
պահպանէ մինչեւ ցնոր կարգադրութիւն :

ՔԱՂՈՒԱԾ

Յ Օ Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ն Է 1861 Ա Մ Ի Ն .

Յուլուարի 12. — Ըստ առաջարկութեան Գեր. Առաջնորդի Վիճակիս՝ Բեկնազարեանց Յովհաննէս վարդապետն կանչուեցաւ Քիշնեւէն եւ յուղարկուեցաւ ինախիջեւան՝ իբրեւ փոխանորդ Առաջնորդի, ուստի եւ ատենապետ Հոգեւորական Կառավարութեան տեղոյն, եւս եւ պաշտօնակատար վանահօր սրբոյ Խաչին Նախիջեւանի:

Փետրուարի 6. — Քիշնեւի եկեղեցական կալուածոց Գործակալութիւնը յանձնուեցաւ Պարոն Գրիգորի Բերօեանց՝ Քարտուղարի Հոգեւորական Կառավարութեանն Պեսարապիոյ:

Մարտի 23. — Ըստ առաջարկութեան Յովհաննէս վարդապետի Բեկնազարեանց՝ Նախիջեւանի Հոգեւորական Կառավարութեան անդամ՝ Ստեփանոսեան Տէր Պօղոս քահանայն արձակեցաւ իւր պաշտօնէն, եւ տեղն ընտրուեցաւ Տէր եղիա քահանայն Նաբշնիքեանց:

Ապրիլի 14. — Նոր Նախիջեւանի մէջ առ Աստուած փոխեցաւ բազմարդիւն փոխանորդն Առաջնորդի Վիճակիս՝ Գեր. Յովհաննէս վարդապետ Բեկնազարեանց, եւ Թաղեցաւ իվանս սրբոյ Խաչին Նախիջեւանի մերձ իգերեզման Յարութիւն վարդապետի Ալամդարեանց:

Մայիսի 18. — Առաջնորդական Ատեանս ընդունեցաւ իմինոդէն սրբոյ Էջմիածնի 41 լանջական պղնձէ խաչ եւ 41 մետալ՝ որ Վիճակիս եկեղեցականացը բաժնուին, իյիշատակ Սեւասթօփոլի պատերազմին 1853-էն մինչեւ 1856:

Մայիսի 22. — Գեր. Առաջնորդին առաջարկութեամբ եւ Ս. Էջմիածնայ Սինոդին հրամա-

նաւը՝ Նախիջեւանի սարկաւազներէն ու դպիրներէն հինգ հոգի յուղարկուեցան Աստրախանու Առաջնորդ Մատթէոս Սրբազան Արքեպիսկոպոսին, որ քահանայ ձեռնադրուին. այսինքն Յովհաննէս դպիր Տէր-Գէորգեան Սաղունեանց, Յովհաննէս դպիր Տէր-Յովհաննէսեան Զարիֆեանց, Յովհաննէս դպիր Տէր-Մինասեան, Մարկոս աւագ սարկաւագ Սողախայեան, եւ Յովհաննէս դպիր Տէր-Սիմէոնեանց:

Յուլիսի 12. — Յրպազարի եկեղեցին կարօտութիւն ունենալով մեծ նորոգութեան, արդէն Գեր. Առաջնորդը այն քաղաքին ըրած այցելութեան ժամանակին հոգաբարձուներ որոշեց իւր այն աստուածաճաճոյ գործոյն, որոց եւ գլխաւորն էր Աղա Յարութիւն Արապեան. եւ որովհետեւ Յրպազարի բարեպաշտ ժողովրդեան այս վախճանաւ իրենց մէջ հաւաքած եւ հաւաքելի գումարը բաւական չէր երեւնար եկեղեցւոյն վայելուչ նորոգութեանը, Գեր. Առաջնորդը ըստ խնդրոյ մեծապատիւ Հոգաբարձուաց՝ հրամայեց որ իրենց յանձնուի նաեւ եկեղեցւոյն այն գումարը՝ որ հանգուցեալ Սփենտիարեան Գէորգ Աղային քովն էր, եւ շահովը հանդերձ եղած էր 2970 ըուպլի արծ.:

Յուլիսի 10. — Ըստ յայտարարութեան Հոգեւորական Կառավարութեան Նախիջեւանի, արժանապատիւ Տէր Յարութիւն քահանայն Քարաքաշեանց կիսոստանայ նուիրել ամէն տարի՝ քանի որ ողջ է՝ ինպաստ չբաւոր աշակերտաց Խալիպեան ուսումնարանին 25 ըուպլ. արծ.:

Յուլիսի 24. — Նախիջեւանի մէջ գովելի սովորութիւն մը կայ որ ննջեցելոց համար զանգակ

զարնել տուողները կամաւոր տուրք մը կուտան եկեղեցւոյն : Այս տուրքը ատենով Առաջնորդական արդեանց հաշուին կանցնէր . իսկ այժմու Գ. Առաջնորդը սահմանեց , եւ Առաջնորդական Ատենիս մէջ արձանագրել տուաւ , որ այն տուրքը այսուհետեւ երթայ Նախիջեւանի Հոգեւոր Դպրոցին իբրեւ նպաստ : — Նմանապէս իտալականատեղեաց հաւաքեալ արդիւնքին կէսը գրեւ երէցփոխանք իրենց եկեղեցւոյն արդիւնք , եւ միւս կէսը նոյն Հոգեւոր Դպրոցին տան :

Յուլիսի 27. — Եկեղեցական եւ քաղաքական իշխանութեանց որոշմամբը՝ Գէորգ Աֆթանտիւլեանցը արձակուեցաւ հարկատուութեան վիճակէն , եւ դասեցաւ իկարգս եկեղեցականաց նոր Նախիջեւանի եւ գիւղօրէիցն :

Օգոստոսի 10. — Խաչատուր դպիրն Յովհաննէսեան Խումաշեանց՝ որ ձեռնադրեալ է քահանայ իվերայ սուրբ Համբարձման եկեղեցւոյ Զաւթըրի՝ իՍ. Էջմիածին , Առաջնորդական Ատենիս հրամանաւր յանձնուեցաւ Նախիջեւանի քա-

հանայից մէկուն յառժամանակեայ կրթութիւն եւ իվարժութիւն :

Օգոստոսի 17. — Աւագ սարկաւագն Ս. Էջմիածնի Խաչատուր Բաբայեան յուղարկուեցաւ իսպասաւորութիւն եկեղեցւոյն Փեթրպուրկի :

Հոկտեմբերի 2. — Ըստ առաջարկութեան մեծարոյ երէցփոխանի սուրբ Պօղոս եկեղեցւոյն Գրիգորուպօլսոյ՝ Պ. Կարապետի Տրդատեանց , եւ ըստ վկայութեան Հոգեւորական Կառավարութեան քաղաքին , հրաման տրուեցաւ երէցփոխանին որ նորոգել տայ այն եկեղեցին՝ գործածելով այն ծախքին համար մինչեւ 300 ռ. արծ. :

Հոկտեմբերի 23. — Ըստ առաջարկութեան Գ. Առաջնորդի Վիճակիս , եւ ըստ հրամանի Սիւնհոդոսին սրբոյ Էջմիածնի , յուղարկուեցան Նախիջեւանէն յԱստրախան իձեռնադրութիւն քահանայութեան՝ չորս տիրացուք , այսինքն Իգնատիոս սարկաւագ Աստուածատրեան , Ալեքսանդր դպիր Պարտախսեան , Կարապետ դպիր Զարիֆեան , եւ Ներսէս դպիր Պարտախսեան :

ՀԱՐԿԱՌՈՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Ա Ռ Ծ Ն Ո Ղ Ս Թ Ո Շ Ա Կ Ա Ի Ո Ր Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ա Յ

ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՅ

Ըստ կանոնի Ուսումնարանիս՝ աշակերտաց թոշակները վեց ամսէ վեց ամիս կվճարուին . բայց որովհետեւ շատ ծնողք իրենց որդւոց թոշակը փոխանակ իւրաքանչիւր ժամանակին վճարելու՝ կուշացընեն այլ եւ այլ պատճառներով մինչեւ երկու իրեք ամիս եւ աւելի , անոր համար Ուսումնարանիս Խորհրդարանը կինդրէ իծնողաց այնպէս կարգադրել իրենց վճարքը որ վեցամսեայ միջոցին ետքի ամսոյն վերջերը՝ թոշակը Ուսումնարանիս Խորհրդարանին ձեռքը հասնի անպատճառ :

